Ձև 2.1

(Ձև 2.1-ը լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ և փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)

ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ

Դիմումի հասցեատերը		
		(նշվում է Ապահովագրողի անվանումը)
1. ՏՈՒԺՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ		
1.1.	Անուն, ազգանուն, հայրանուն (անվանում)	
1.2.	Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (ՀՎՀՀ)	
1.3.	Տուժողին պատկանող բանկային հաշվեհամար (լրացվում է՝ ըստ ցանկության) (կիրառելի չէ այն դիմումատուների գծով, որոնց համար Բյուրոյի կանոններով նախատեսված չէ դիմումով ապահովագրական հատուցման գումարի ստացման հաշվեհամարը փոփոխելու հնարավորություն)	
	Բանկի անվանում	
	Հաշվեհամար	
1.1. ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԻ ՏՎՅԱԼՆԵՐ (կիրառելի է տուժողի իրավահաջորդի առկայության դեպքում)		
1.1.1.	Անուն, ազգանուն, հայրանուն (անվանում)	
1.1.2.	Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (ՀՎՀՀ)	
1.1.3.	Տուժողի իրավահաջորդին պատկանող բանկային հաշվեհամար (լրացվում է՝ ըստ ցանկության) (կիրառելի չէ այն դիմումատուների գծով, որոնց համար Բյուրոյի կանոններով նախատեսված չէ դիմումով ապահովագրական հատուցման գումարի ստացման հաշվեհամարը փոփոխելու հնարավորություն)	
	Բանկի անվանում	
	Հաշվեհամար	
2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏԱՀԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		
2.1	Պատահարի տեղի ունենալու ամսաթիվը	
2.2.	Պատահարի գծով քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական վարույթ	☐ իրականացվել է և առկա է օրինական ուժի մեջ մտած ակտ
		☐ իրականացվել է, սակայն դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած ակտ
		☐ չի իրականացվել
3. ԴԻՄՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋԸ		
3.1 Ուսումնասիրել սույն դիմումով ներկայացված պատահարը և կատարել ապահովագրական հատուցում:		
☐	3.2 Իրականացնել վնասված գույքի առանձնացված գնահատում (լրացվում է ըստ դիմողի ցանկության՝ ի լրումն 3.1 կետով ներկայացված պահանջի):	
4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՆԱՍՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		
հ/հ	Վնասված գույքը նույնականացնող տվյալներ	Վնասված (ոչնչացված) գույքի փաստացի գտնվելու հասցեն
1		
2		
...		
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ		
5.1.	Նամակագրության էլեկտրոնային փոստի հասցե (եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված է ծանուցման կոնկրետ հասցե, ապա այդ հասցեից տարբերվող հասցեի նշումն իրավական ուժ չունի)	
5.2	Հեռախոսահամար	
6. ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
հ/հ	**Փաստաթղթի անվանումը**	
1		
2		
...		
7. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
7.1. Սույն դիմումը ստորագրելով՝		
7.1.1.	հավաստում եմ, որ սույն դիմումով ներկայացված տվյալները ճիշտ են, համապատասխանում են իրականությանը և գիտակցում եմ, որ կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող եմ ենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ սույն դիմումը կարող է մերժվել;	
7.1.2.	հավաստում եմ, որ ստացել եմ սույն դիմումի պատճենը, գիտակցում եմ, որ ապահովագրական ընկերությունը կարող է պահանջել պատահարի արդյունքում պատճառված վնասները հիմնավորող այլ փաստաթղթեր:	
7.1.3.	թույլատրում եմ ապահովագրական ընկերություններին և Բյուրոյին միմյանց միջև կամ երրորդ անձանց հետ ցանկացած եղանակով և կրիչի վրա շրջանառել (ստանալ և տրամադրել) իմ վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ (ներառյալ՝ ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմող) այնքանով, որքանով դրանք ապահովագրական ընկերության/Բյուրոյի գնահատմամբ անհրաժեշտ են ապահովագրական հատուցման գործընթացը հավուր պատշաճի իրականացնելու, ինչպես նաև դրա հետ կապված որոշակի ստուգումներ իրականացնելու և հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքն արդյունավետ իրականացնելու համար: Մասնավորապես, սույնով խնդրում եմ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին սույն պատահարի շրջանակներում քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում համապատասխան որոշումը և (առկայության դեպքում) դրա հիմքում ընկած փաստաթղթերը (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) տրամադրել սույն դիմումն ընդունած ապահովագրական ընկերությանը կամ Բյուրոյին՝ վերջիններիի հետ համաձայնեցված եղանակով.	
7.1.4.	պարտավորվում եմ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել սույն դիմումի հիման վրա վճարված կամ ավել վճարված հատուցման գումարը, եթե դրա վճարումից հետո պարզվի, որ ՀՀ օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում և հիմքերով համապատասխանաբար հատուցում ինձ ենթակա չէր վճարման կամ պետք է վճարվեր վճարվածից պակաս հատուցում.	
7.1.5.	հնարավորություն եմ տալիս փորձագետին և ապահովագրողին գույքի փաստացի գտնվելու հասցեում երկու աշխատանքային օրվա (համաձայնեցված հայտարարագրով գործընթացի դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա) ընթացքում զննելու վնասված գույքը, անհրաժեշտության դեպքում նաև թույլատրում եմ փորձագետին վնասված գույքի և (կամ) դրա առանձին դետալների ապամոնտաժումը՝ պատճառված վնասի չափը հստակ ճշտելու նպատակով:	

7.1.6.	վնասի վերականգնման (գույքի վերանորոգման) տարբերակն ընտրելու պարագայում պարտավորվում եմ Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և չափով լրավճարելու վնասի վերականգման համար:			
7.1.7.	սույն դիմումով ներկայացված պատահարի գծով վնաս պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձի կողմից կամ նրանց անունից՝			
	☐	պատճառված վնասի դիմաց փոխհատուցում չեմ ստացել		
	☐	պատճառված վնասի դիմաց ստացել եմ փոխհատուցում նշված գումարի չափով		ՀՀ դրամ
8	Այլ նշումներ			
9	**Դիմումատու**			
		(անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)		**(ստորագրությունը)**
10	**Դիմում ընդունող**			
		(գրաղեցրած պաշտոնը)	**(անունը և ազգանունը)**	**(ստորագրությունը)**
11	**Դիմումի լրացման ամսաթիվը**			
		օր	ամիս	տարի
Սույն դիմումը համարել ներկայացված այն ապահովագրական ընկերությանը (ընկերություններին), որն օրենքի և Բյուրոյի կանոնների համաձայն պարտավոր է հատուցում տրամադրել:				

Հավելված
Ձև 2.1.1-ի

ՎՆԱՍՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ

(կիրառելի է, երբ առանձնացված գնահատման պահանջը ներկայացվում է հատուցում ստանալու դիմումի ներկայացումից հետո)

1.Դիմումի հասցեատերը			
	(նշվում է Ապահովագրողի անվանումը)		
2. Վնասված գույքի առնչությամբ հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի ներկայացման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
3. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋԸ			
Ի լրումն վնասված գույքի առնչությամբ հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի՝ խնդրում եմ իրականացնել վնասված գույքի առանձնացված գնահատում:			
Դիմումատու			
	(անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)	**(ստորագրությունը)**	
Դիմումի լրացման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի